

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նույնպիսի համար
Տարեկան
Վեցամսեայ
Արտասահմանի համար
Տարեկան
Վեցամսեայ
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 ռ. ղ.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուցման տղր ստացիկ
երեսին համար 40 սանթիմ
ե. իսկ վերջին երեսի համար
20 սանթիմ ե. երեսին
սակի սկզբներու համար
20 Օլո գեղջ կըլլայ :

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Redakcija na vvestnyakъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

R. P. Kalkankarian
(Autriche)
Mehnikaristangasse N. 4
Wien

(ԳԻՆ. 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ. 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը դիմենք մեր
այն գործակատարներուն որոնք
տարբեր և ամիսներով իրենց
քով պահած են թերթիս զան-
ձուած գրամները, և շարունակ
մեզմէ ժամանակ կը խնդրեն ու
կը խարեն: Եթէ այս անգամ ալ
լուս մնան՝ մենք ստիպուած պիտի
ըլլանք ուրիշ միջոցներու դի-
մել:

Նոյնպէս և կր խնդրենք մեր
այն բաժանորդներէն որք մինչեւ
ցարդ չեն վճարած իրենց բաժ-
նեկները հաճին անյապազ մեզ
ղրկել, որովհետեւ Բ. տարին
լրանալուն 2 1/2 տմիս մնաց:

ԳԼԽԱՏՈՒՄ

Դեռ Արամեանի ստեղծած մա-
հուան տպագրութիւնը չանցած,
երկրորդ գուժը հասաւ: Անդու-
գական հերոս Սերոբ-Աղբիւրը
գլխատուած է, կրկին շնորհիւ մի
վատ հայի: Գոնէ այդպէս են
յայտարարում «Թան» և մեր Պոլ-
սոյ թղթակիցը, Երանի թէ սուտ
լինէր, թէ գլխատուած և թէ
մատնու թիւնը:

Կախազան, գլխատում, անհա-
յտուհետեւ Սուլթանի միջոց-
ները հայ ապստամբների գէտ:

Մէկիկ մէկիկ ազգային փըր-
կութեան սեղանի առջեւ զոհուած
են մեր հերոսները—հայ յեղա-
փոխութեան սիւները: Կախում է
Սուլթանը, գլխատում է Սուլ-
թանը բռնապետներին յատուկ
հռանդով և յոյսով որ այդպիսով
վերջ կը դնի հայ ապստամբու-
թեան:

Բայց նոյնիսկ Սուլթանի այդ
բռնապետական կատաղութիւնը,
բարկութիւնը, սպառնաց է որ
հայկական յեղափոխութիւնը փո-
խանակ մարելու, հետզհետեւ ա-
ւելի բորբոքում, աւելի ար-
ծարձում է և հեռու չէ այն
րոպէն երբ սարսափելի մի հըր-
դեհի պէտք է վերածուի:

Սուլթանը կախելով և գլխա-
տելով ուղտի է մեզ յուսահա-

տեցնել, բայց ինքն էլ չէ հա-
ւատում իր ձեռք առած միջոց-
ների գրականութեան: Նրա յի-
շողութիւնը սուր է. նա չէ մո-
ռացել Յունական, Սերբական և
Բուլղարական աղատութեան
պատմութիւնները, Այդ երկիր-
ներում էլ յեղափոխական գոր-
ծը աւելի ուժեղ կերպով էր
պրոպագանդա կախազաններից և
գլխատումներից յետոյ, ու հսկա-
յական խորիստ սրայլերով յառա-
ջանում գէպի նպատակակէտը:

Կոտորածները, բանտային սան-
ջանքները չօգնեցին Սուլթա-
նին, այսօր նա կախում և
գլխատում է: Այս բոլորը բռնա-
կալութեան թողլ լինելու գրա-
ւակաւները են. և միշտ փրա-
կար հետեւանք են սեւեռները
նույնիսկ համար:

Մեր ցաւը մեծ է Սերոբների
կորուստի համար:

Հայ ժողովուրդը այդ տե-
սակ առիւծներ շատ քիչ է ծնել:
Միեւնոյն ժամանակ մեր սիրտը
պէտք է ուռչի ազգային արժա-
նապատւութեան տեսակէտով. ու
րովհետեւ Սերոբների գոյու-
թիւնը, կեանքը և մահը ապու-
ցոյց է որ հայ ժողովուրդը գեռ
չէ կորցրել իր ընդունակու-
թիւնը առիւծներ ծնել, նոյնիսկ
իսկ իր հողու և սրտի ամենա-
անկեղծ վիճակի մէջ. ու այսու-
հետեւ աւելի շատ պէտք է ծնի:

Բաղմաթիւ ցածերի, վատերի,
թողլերի, գաւաճանների հան-
դէպ, որոնք իրենց զղվելի գոր-
ծերով արտա են բերում հայ ժո-
ղովրդին, և երբեմն յուսահա-
տութեան ամպով ծածկում հայ
ժողովրդի ապագային նիրված-
ների ճակատները, Սերոբները
մոռացնել են ստիպում են յատու-
թիւն և հայութեան լաւ մասի
սրտից դուրս վանում թուլութիւն
և վհատութիւն:

Սերոբները մեր մոթ կեանքի
մէջ իրենց փառասոր ու հերոսա-
կան մահով մի լուսավառ գիծ են
թողնում, որ հայ ժողովուրդը
աւելի անսայթաք կերպով կտրէ
մեր աղատագրական ճամբան:

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 2/20 նոյն.

Անցեալ թղթակցութեան մէջ
յիշած շնական ուղերձը ներկա-
յացուեցաւ:

Նոյեմբեր 12ի երեկոյին Խառն
ժողովին առաջարկուեցաւ ու-
ղերձը, ինչպէս արդէն գուշակած
էինք՝ առանց բառ մը բերան-
ներէն հանելու. ստրկարար ա-
մէնքն ալ գրին իրենց գարշելի
անունները իրենց յաւիտենական
այդ նշանադրին տակ: Քանի մը
մը անդամներ բացակայ էին, որ-
տաարտի կը սպասէինք որ գէթ
բացակաները թոյլ բողբ մը կը
նեն, չը ստորագրելով այդ ան-
պատուաբեր դատապարտութեան
թուղթը... Զո՛ր յոյսեր, Բա-
ցականներն ալ ստորագրեցին շա-
բաթ առաւ, առանց բացատու-
թեան. շաբաթ կէս օրին տեսնե-
նորը Օրմանեան տարաւ այդ
«իրեն» վաշիլ ուղերձը պալատ,
ներկայացուց թահախին պէյին
(առաջին քարուղար Համիրին),
թահախին տարաւ Սուլթանին և
քիչ մը ևտքը բերաւ բարձրա-
գոյն գոհունակութիւնը որ հըր-
ճուանքով լեցուց Օրմանեանին
սեւ սիրտը:

Օրմանեան խոտտովանած է թէ՛
ուղերձը քիչ մը «պապ» ընդու-
նելութիւն գտաւ... ո՞վ գժբախ-
տութիւն:

Պատճառը գիտէ՞ք ինչ է. լսե-
ցէք, Հայ-Թուրք մանկաւիկ Ար-
թին խմբագրած է եղբոր ուղերձը
աւելի տանկական հողով, «Հայ
ազգը թուրք բարեխնամ կառա-
վարութեան հովանիէն հեռի և ոչ
մէկ տեղ կրնայ ապրիլ ու շունչ
քաշել. բաղմաթիւ փաստեր և
ամբողջ պատմութիւնը առ հաս-
տատեցին» և այլն... Եւ կրուի
թէ՛ հոգեւորականներն ու Օր-
մանեան վոխած են աս բացար-
ձակ ստու թիւնը քիչ մը աւելի
քաղաքավար ստու թեան, ընդ-
հանուր շնորհակալութեան յայտ-
նելով:

Պալատը որ գիտէ եղբոր Արթի-
նին խմբագրած ձեւը (թերեւս և
ինքն է առեւ Սրթինին ուղերձի

օրինակը), տեսնելով աւելի պա-
կաս հաւատարմական դարձուած-
ներ՝ սառը կընդունէ զայն: Ու
Օրման խի՛ստ զգշայած է որ յի-
մարութիւն ըրին, Արթինի խմբ-
ագրածը փոխելով:

Ռատմական խորհուրդին քայ-
քայեալ ու լուծեալ վիճակի մէջ
է. անդամները հրաժարած են ու
կը հրաժարին. ամէնքն ալ գլխ-
գոհ են Օրմանեանէն, չեն կրնար
անոր ձեռքին տակ գործ մը տես-
նալ:

Դժգոհ են և դատաւներու հա-
մարեա ամէն առաջնորդները,
որովհետեւ Օրմանեան և ոչ մէկ
պաշտպանութիւն կընէ անոնց
դիմումներուն:

Ինչպէս և Մուշէն Պատրիար-
քարան հասած տեղեկագրերը կը
յուցնեն որ Կովկասէն անցած
խումբը 80 հոգիէ կազմուած է ե-
ղբր, որու հետ միացեր են և
քանի մը տեղական զիւղացիներ:
Պաշարող թուրք ու քիւրտ զոր-
քերու թիւը մինչեւ 700ի կը
հասնի եղբր, չի հաշուելով պա-
շարու քնները: Թիւրքերու կո-
րուստը 45 հոգի է, որոնց մէջ և
Տէրվիլ պէյը ու իր անշուղական
եղբայրը, իսկ հայերունը 30.
ատոնցմէ միայն 15ը յեղափոխա-
կաններ էին իսկ միւս 15ը ան-
մեղ զիւղացիներ:

Սերոբը այդ խումբի հետ չէ
եղբր, այլ միեւնոյն օրը, այ-
սինքն հոկտեմբեր 27ին, Սաս-
նոյ կէլիկուղան զիւղին մէջ կը
մատնուի, կը պաշարուի իր թա-
ղատոցին մէջ... 15 հոգի արեւը
մարելէ ետքը՝ ինք, եղբայրը,
որդին և իր ընկերքաջ քահա-
նան կսպանուին, կրնն ալ ծան-
րապէս կը վրաւորուի ու թշնա-
միւրի ձեռքը կրնայ:

Սերոբի գլուխը կը կտրէ կա-
ռավարութիւնը և Բաղէշի մէջ
երկու օր իցոյց կը դնէ: Ետքէն
ամէնուն գլակներն ալ կը յանձ-
նուին առաջնորդին որ զանոնք
եկեղեցիներէն միոյն բակին մէջ
կը թաղէ:

Աս, իսկապէս կեկծեցուցիչ լո-

բուստը անփոխարինելի է : Եթե թը
տարի շարունակ բանակներ դղըր-
դացնուլ, ամբողջ կոտավարու-
թիւն մը ոտակն ու վրայ ընող Աե-
րորը ստոր դաւածանի մը մատ-
նութեան շնորհիւ՝ այրիացուց
Մուշն ու Սարունը . ապադայ հայ
սերունդը անպատճառ պիտի ան-
մահացնէ այդ հերոս-հոկային
յիշատակն ու գերեզմանը :

Սերբը պաշտելի հերոս մըն է
և անոր մահուան յիշատակը սրտի
խոր կակիծով արձանադրեցինք :
Հիմակ ալ կուգամ արձանա-
գրելու տարբեր տեսակի մը տխուր
փաստեր :

Ձը կարծէք որ Համիտ միայն
զմեղ կը հնձէ . — ո՛չ, իրենները
մեղմէ սուելի ողբալի վիճակ մը
ունին . բայց ի՞նչ ընես, որ հա-
րէմի ծնունդ այդ անպիտանները
չէ՞ կրնար հրէջը ասպարէզէն
բառնալ, թէեւ ամէն տեսակ
յարմարութիւններ ունին :

Նոյեմբեր 4ի կիրակի գիշեր
Սուլթանի Ալպանայի պահակա-
զօրքը, իրենց սուներուն մէջ,
երեք խիտ կարեւոր թիւրքեր կը
ձերբակալէ : Այդ գորք արդէն
իմացած կըլլաք եւ բոսնական լրա-
գիրներէն՝ ասոնց տուները խու-
զախկած ասան կը գտնուին խել
մը թուղթեր . . .

Ասոնց հիման վրայ կը ձեր-
բակալուին 70ի չափ ուրիշ կա-
րեւոր անձեր : Գեոպաններէն ու-
մանք միջնորդած են բայց ի
զուր :

Նոյեմբեր 5ին պալատի մէջ
արտակարգ դատարան մը կը

կազմուի հետեւեալ անձերէ .
Մեծ-Եպարքոս, Շէյխ-Իւ-Իւլամ,
թնդանօթածիզ զօրքերու ընդ-
հանուր հրամանատար, արդա-
րութեան, ներքին գործոց և զի-
նուորական նախարարները : Գա-
տարանը այդ երեք անձերը Սուլ-
թանի գէմ՝ դաւադրութեան մէջ
մեղադրելով՝ կը դատապարտէ
զանոնք յախտենական աքսորի :
Հինգշաբթի օրը Մահսուսէի Ա-
րարիա դաւոյ շոգենար տարու-
ղանոնք հարաւային Արարիա :
Եթէ անցերնին հասնին լաւ է . . .

Կրուի թէ ասոնք կը մեղադ-
րուին Սուլթանը գահնկեց ընկ-
լու և անոր տեղ կամ իր որդին
Մէհմէտ Սէլիմ կամ իր եղբայր-
ներէն Բաշիտ կամ Հայրէտտին
բրէնները տեղը անցնել :

Թուրք բարձր շրջաններու եր-
կիւղը, անհանգստութիւնը և ի-
րարանցումը վերջին ծայր զօ-
րացած է . ամէն մարդ կը վախ-
նայ :

Վախնալու փոխարէն գործ մը
ընելու է . դուք ամէն յարմարու-
թիւն ունիք՝ հայ չէք՝ մուտք ու-
նիք պալատը . . . Ձէք ըներ՝ ու-
րեմն կրեցէք Համիտի մահազին
հարուածները, ճանճի պէս չոր-
ցէք արաբական ու թարսպու-
զական արեւին ու աւաղներուն
մէջ : Գառն փորձերը օր մը ձեզի
ալ պիտի ստուգեն արիւնի դի-
մալու, բայց խիտ ու զպիտի ըլ-
լայ . ձեր ամենէն լաւ ուժերն
չառ-չատերը կը յոշտուին կար-
միր-հրէչէն :

Ռուսական զինուորը անուշ

լեզուով դառն դեղ մը դրաւ Սուլ-
թանի քիթին նոյեմբեր 5ին :

Յայտնի է որ այս թուականի
յունուարէն՝ Ռուսիոյ զինուորա-
կան պարտքը վճարելու համար՝
որոշուած էր ընդհանուր համա-
ձայնութեամբ, Այսթնի, Հալէպի,
Ասանայի և այլն՝ հինգ վիլայէթ-
ներու տուրքերը յատկացնել :

Պանք-Օթոման պիտի քօմիսէր
մը նշանակէր ու քօմիսիօրի են-
թարկէր այդ հինգ վիլայէթներ-
ուն ելեւմուտքը և ինքը պա-
տասխանատու հանդիսանար Ռու-
սիոյ հանդէպ : Տարեկան վճարե-
լիք դումարին չափը որոշուած
էր 360,000 տաճկական ոսկի, որ
պիտի վճարուէր ամսական ամ-
բողջ գումարը յունուարէ յուն-
ուար :

Այժմ Պանք-Օթոման կը յայտնէ
որ ինքը կը հրաժարի պատաս-
խանատուութենէ՝ որովհետեւ չի
կրնար գլուխ ելլալ գաւառական
իշխանութիւններու և պալատի
հետ որ կընեն ինչ որ քէֆէրնին
կրկէ : Պանքան կը հրամայէ այս
ինչ ձեւով առմարներ բռնել,
ստացագրեր տալ, հաշիւներ պա-
հել և այլն՝ իր խօսքը կամ ան-
զական վարչութիւններու կողմէն
կարհամարուի կամ պալատէն կը
լուծուի . . .

1897ի յունուարէն մինչեւ օրս
360,000 ոսկիէն վճարուած է մի-
այն 60,000 ոսկի : Զինովիէվ
ներկայացնելով այս ամէնը հաս-
կացուցած էր որ ասանկ շարու-
նակուիլ չի կրնար ստիպուած
պիտի քիչ մը սեղմենք կապերը :
Չարմանք բուն է, ստակ չկայ .
սնանկ է . ալ ի՞նչ կուզէք, պիտի

ուտէք, կերէք, ալ ի՞նչ կու-
տուի պէս մուկին հետ կը խա-
ղաք :

ՔԱԺ

ԵՐԿՏՈՂ ՄԸ ՄՁԵՑԻ ԵՂԲԱՐՑ

Երբ Մշոյ առաջնորդարանին
կողմ կարգացի, ստիպուեցայ
սրտի ցաւօք երկտող մը գրել
Մոլտովիոյ և բոլոր Ռուսիայի
մէջ գտնուած մեր Մշեցի եղ-
բայրներու :

Եաշի և իր շրջակայ գիւղերու
մէջ ալ բաւական թուով Մշեցի
կը գտնուին, որ 5—10—15 տա-
րիներէ ի վեր հայրենի տակը,
կինը ու զաւակունքը թողուլ է-
կած են պանդուխտ օտար երկիր,
այն ուխտով, որ մէկ կամ առա-
ռաւելն երկու տարի չափ պան-
դըխտութեան դառնութիւնը քա-
շելով մի քիչ դրամ հասաքեն ու
յետոյ հայրենիք վերադառնան
Իրենց սիրելի ընտանեաց քով .
բայց աւա՛ղ, օտար աստղերու
տակ կը մոռնան իրենց ուխտը :
Կարծես սառեր է իրենց սրտեր-
նուն մէջ ընտանեկան սուրբ սէրը,
և ի՞նչպէս չի ստուի քանի որ այն-
չափ երկար ու ձիգ տարիներէ ի
վեր չեն տեսած իրենց կիները,
զաւակները և հարազատ հայրե-
նիքը :

Վերջապէս անոնք, որ խոտա-
ցած էին վերադառնալ իրենց
օճախը իրենցներուն հետ ուտե-
լու այն դրամներն, որ այնչա՛փ
գառնութեամբ շահած են, կը

ԸՆԴԴԻՄԱԽՕՍԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ Պ. Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻՆ

(Շար. Լախորդ քիւնն և վերջ)

Չօպանեան կը բողոքէ նոյնպէս
«Մրջակ»ի գէմ թէ ինքը երբէք չէ
ըսած «որ հայ յիզափոխական շար-
ժանները եղան հայկական ջարդե-
րուն հիմնական պատճառը» և կըն-
դունի թէ «թիւրք կատապրութիւ-
նը վերջին Ռուսօ-թրքական պատե-
րազմէն ի վեր ծրագրած է հայ ժո-
ղովրդը ջնջելու ծրագիրը» : Բողոք
մը, որ շատ չի տարբերի մեր քիչ
մը վերը յիշած հերքումէն : Ասոր
հաստատ համոզում մը գոյացնելու
հոգեւոր մեր ընթերցողէն կը խնդ-
րենք զարձակ թղթատել Չօպանեա-
նի նախորդ յօդուածները՝ հաս բա-
ւականանալով միայն յի.ել «մի հայ-
րենատիրութիւն» յօդուածէն հե-
տեւեալ պարբերութիւնը :

«Հայրենասէրներ չեն այն տեսակ
մը մարդակերպերը, որոնք հեռուէն
ջարդեր կը սարքեն և սքանչելի
անձնութիւններ անիմաստ և
անօգուտ կերպով կը գործածեն, որ-
պէսզի խեղճ միամիտներ «կեղբոն»ին
գրամ զրկեն» :

Եւ արդէն անմիջական հակաս-
ութեամբ մը այս բողոքին հետ մէկտեղ
կը պնդէ զարձակ թէ՛ «թիւրք կա-
տապրութիւնը երբէք չպիտի հա-
մարձակէր մեծաքանակ կոտորածնե-
թուն հրամանը տուլու, եթէ «կազմա-
կերպուած» ցոյցերը տեղի ունեցած
չըլլային . այնպէս որ այդ ցոյցերը
առիթ առին, «պատրուակ» եղան
ջարդերուն իրագործմանը» :

Անգամ մը ընդունելէ ետքը թէ
թիւրք կատապրութիւնը արդէն
Ռուսօ-թրքական պատերազմէն ի վեր
ծրագրած էր հայ ժողովուրդը ջնջե-
լու ծրագիրը, կարծենք «մաթեմա-
թիկօրէն» կարելի է հաստատել . որ
իրեն համար շատ դիւրին էր պատ-
րուակներ ստեղծել, ու այդ պատ-
րուակները կըստեղծուէին միշտ այն
ժամանակ, երբ եւրոպայի քաղաքա-
կանութենէն երկիւղ մը չկար, իսկ
երբ քաղաքականութիւնը աննպաստ
էր, ու եւ ջոյց կամ շարժում ջարդի
պատրուակ չէր ըլլար : Օրինակ՝ Պօլ-
սոյ 97ի ցոյցը, երբ ոչ մէկ կոտո-
րած չպատահեցաւ, օրինակ նոյն
թուականին Խանասարի արշաւանքը
ու դեռ վերջերս «Պրանքի» թիւր-
քայնութիւնի հաղորդած հայ իւռեմ-
բի մը արշաւանքը, որոնք ու եւ է
ջարդ յատաճ չբերին : Բայց երբ վա-
ղը պատեհ առիթ մը ներկայանայ
հայրու կողմէ մղկիթներու վրայ
երեւակական յարձակում մը, կամ
հայ բանակի իր մը շուկային մէջ
թիւրքի մը հետ քիչ մը բարձր-խօ-

սիլը՝ կրնան կոտորածի ամենաօրի-
նաւոր պատրուակներ ըլլալ :

Չօպանեանի՛ ցոյցերու մասին այս
ակնարկութեան մէջ՝ ուրիշ աւելի
դատապարտելի կէտ մը կայ, զոր
չենք ուզեր լուրթեամբ անցնել :
96ի պահպանէ ցոյցը դատապալանով
հանդիման կըլէ . «Պապը Ալիի ցոյցը
հասկնալի՛ թերեւս նոյնիսկ անխու-
սափելի էր» : Ինչո՞ւ . թէ որ ցոյցե-
րը իր կոտորածներու պատճառ կամ
պատրուակ պիտի ընդունինք, ու
իրենց այս հետեւանքով պիտի գը-
նահատենք զանոնք . Պանգայի ցոյ-
ցը եթէ Պօլսոյ կոտորածը յատաճ
բերաւ՝ Պապը Ալիին թէ Պօլսոյ եւ
թէ ամբողջ գաւառներու ջարդին
դուռ բացաւ : Իսկ եթէ Պանգային
իրեւ փորձուած սխալի մը կրկնու-
թիւն պիտի դատապարտենք՝ պէտք է
գիտնալ, որ այն միջոցին շատ մը
լուրջ խորհողներու հասաքն էր, թէ
Պօլսոյ մէջ խոտովութիւնները վառ
պահելով կարելի պիտի ըլլար և բո-
պական միջամտութիւնը հրաւիրել :
Ու այդ ցոյցը՝ այն ժամանակ նոյն
իսկ այսօրուս ամենակատաղի հա-
կատարողներէն զօրուեցան . և այն
ատեն միայն պախարակուիլ սկսաւ,
երբ ժամանակ անցնելէ ետքը ակըն-
կալուած գրական յօդուած չիրակա-
նացան : Ըստմիտ լով խօսք մը չըլ-
լալուն համոզուելու համար կը բաւէ
միայն աչքէ անցնել Արփիտի անա-
նուն օսկանները և անոր կեանքի
(99) 3 թիւը, ուր Փաշալեանի յօ-

դուածէն կը տեղեկանանք թէ մին-
չեւ իսկ նուպար փաշա 96ի ցոյցէն
ետքը հայկական խնդրի կարգող-
րութեան ամենէն աւելի հայտա-
քով սպասողներուն մէջն էր :

Չօպանեան որչափ ալ ինքզինքը
տեւէ կուսակցութենէ հեռու յայտա-
րաւէ, երկու համանման ցոյցերու
այս տարբեր գնահատումէն մէջ ան-
չուշա մեծ գեր մը կը խաղան իր հին
կապերը Արփիտին հետ, որ սկիզբն
ի վեր ամէն տեսակ խեղաթիւրումի
զիջանելով կը ճգնի Պապը Ալիի
ցոյցը մինչեւ երկինք բարձրացնել
իրեւ «յիզափոխութեան բարոյական
յաղթանակ» եղող ժողովրդային մեծ
ցոյց մը, իսկ Պանգայինը դուրսէն
թեւադրուած անիշխանական վիճում
մը ներկայացնել : Մինչդեռ Չօպան-
եան իսկ չկրնար ուրանալ, որ
Պանգայի ցոյցը, որու կազմակեր-
պիչները հարիւրուոր տարճանակ-
ներով ու ուսմբերով փողովուրդը
ինքնապաշտպանութեան համար գի-
նելու կանխահոգութիւնն ալ ունե-
ցած էին (ուրիշ խնդիր թէ հասա-
րակութիւնը չկրցաւ գանոնք պէտք
եղածին պէս գործածել) «Իրեւ յառ-
դուգն geste մը» անհամեմատ գեղեց-
կութիւն մը ունէր Պապը Ալիին, որ
իր կծիկ գնող պարագային խնդրե-
նորէն աւելի կը նմանէր գնառ-
նիկու մէջ երբեմն պաշտօնակալի մը
զէմ սարքուած թիւրք ժողովրդի
պոռոտ ցոյցերուն : Իսկ գործը ալ
խմտտակութեան ու վատութեան կը

վատնեն գինեմուտ թեամբ ու սի-
րամուտ թեամբ (*). չեն մտածե-
ր որ օտարու հեաց սիրոյ այն համ-
բոյրները որ կը գործեն իրենց
ճակտից վրայ թունաւոր իժե-
րն, որ ամբողջ մարմինն թու-
նաւորելով մինչեւ իսկ գերեզ-
մանին զուռը կառաջնորդեն զա-
նոնք. ինչպէս որ քանինըր տե-
սած ենք:

—Ո՛վ Մշեցի եղբայրնե՛ր, զի-
տեմ որ հայր էք և զուսակաց տէր,
մտիկ ըրէ՛ք ինձ, զի ինչ որ պիտի
բան հոս՝ միմիայն ձեզ համար է-
րուք էք ձեր ասն մէջ տեղէն
կախում լինելով իսկ ինչ որ ըստ
որ ամբողջ ուսնը և տան մէջ ին-
նեքը կը լուսաւորէ. և երբ գուր
տունէն կը հեռանաք այն տան
կանթեղին լոյսն ալ կը մարի ու
ձեր տունը հանդերձ ընտանեօք
խաւարի մէջ կը մնան և միշտ կը
սպասեն անհամբեր ձեր վերա-
գաւթին, որպէս զի նորէն կան-
թեղը լոյս ստանալով խաւարումէն
ազնւորին. սակայն երբ գուր զա-
նոնք մտնալով տարիներով տուն
չէք վերադառնար, անոնք նոյն
խաւար մթութեան մէջ մնացած
կուլան ու կողքան իրենց սեւ
բախտին վրայ և միշտ հառաչներ
կարձակեն, որ պատճառ եղած
էք իրենց թշուառութեանց. և
այն հառաչները որ գուրս կու-
զան հալ ու մաշ կնոջ սրտերէն
ձեզ համար մէկ մէկ անէ՛ք քնն-
ընդհանրէք:

(*) Հոս գտնուող բոլորն ալ, որ
հայրենիքը կնոջ ու զուսակաց տէր
եղած են, մէկ մէկ գնչուներու հետ
կը կենակցին եւ իրենց ամենօրեայ
վասակած գրամին ասոնց կոկորդ
կը լեցնեն:

հասցնէ Չօպանեան, երբ կելլայ կը-
սէ թէ «Ժողով կամ թիֆլիս գտնուող
պետերը գիտէին որ այդ ցոյցը հա-
ղաբար հաշտութեամբ տեսնու-
պատուար պիտի ըլլար եւ ասոր փոխարէն եւ-
րոպական միջամտութեան ու եւ
խոստում կամ ապահովութեան չու-
նէին» իբր թէ երբ և իցէ կարիք
ըլլար յեղափոխական ու եւ ձեռնար-
կէ մը առաջ լոկոսիտ կնքել և եր-
պական պետութեան մը հետ: Չենք
գիտի թէ գործելու այս նորաճար
մեթոտն ալ Միքէլիի գրեթե ան-
մէջ կարգադրած է:

Կը յիշեմ երբ Կրէտէի ազատու-
թեան առթիւ «Երօջակ» խմբագրա-
կան յօդուած մը հրատարակած էր,
Չօպանեան «Անահիտ» մէջ զայրոյ-
թով մը կը յայտարարէր թէ՛ շատ
տարբեր են Կրէտէի և Հայաստանի
պայմանները, ու մեզի համար աղե-
տալի պիտի ըլլայ անոնց ընթացքին
հետեւիլ: Ասանց այս մասին իրեն
զազափարակից ըլլալու կրնոյնք
թէ միջավայրերու տարբերութիւնը
նկատի առնել անհրաժեշտ է, երբ
երկու երկիրներու գործունէութիւնը
կը բաղդատուին: Սակայն կերեւոյ
թէ Չօպանեան այս անհրաժեշտու-
թիւնը կը յարգէ միայն այն պար-
ագային, երբ փաստերը իրեն ինք-
պաս են: Իսկ այս անգամ երբ ի-
տալիայի ազատութեան օրինակը ի
մէջ կը բերէ, չի մտածեր որ մենք
մեր գիրքով շատ կը տարբերինք
իտալիայէն: Չը հաշուելով միւս ա-

նքն են. և այն կաթիլ կաթիլ հո-
սած արատաւնքը որ իրենց սի-
րուն այս երէն վար կը գործին,
ձեր կենաց լիւրերը մէկ մէկ կը
կտրեն: Քանի որ անոնց թըր-
ուստութեանց պատճառ պիտի
ըլլայիք ու չի պիտի հոգայիք ա-
նոնց պիտոյքները, հայտ ինչո՞ւ
ամուսնացաք: Ինչո՞ւ ուստեցիք
այն սիրտ քանի որ այժմ ու-
րիշին կը խոստանաք. ինչո՞ւ
ուստեցիք Աստուծոյ սեղանին
առջեւ թէ յաւիտեան հաւատա-
րիմ պիտի ըլլաք ձեր կնոջ ու
հիմա կը գործէք այն ուխտը որ
Աստուած ալ չի ներբը ձեզ:

Ո՛վ Մշեցի եղբայրնե՛ր, յի-
չեցէք որ Մշոյ գաղտնի մէջ ան-
թիւ սրբեր կը գտնուին և կը
կարծէք թէ անոնք ձեր դաւակ-
նեքը չեն, մի կարծէք այդպէս
Անոնք ամէնքն ալ ձեր սիրտուն
զաւակներն են և այնչափ տարի-
ներէ ի վեր հօր երես չի տեսնե-
լով և հայրական խնամքներէ
զուրկ մնալով, փնթի ու ծարաւ,
մերկ ու բոլորի անտէր որբեր են
գարձած ու օտարին գլխի թեանը
կը գիտեն. իսկ գուր ինչ կընէք,
քանի որ անոնց հայրերն էք:
Ահա ձեռքը եկաւ իր ստանալու-
նիքներովը, ինչ պիտի ընեն
այն խնձարաւորները, որ ո՛չ
հաց սեւին ուտելու և ո՛չ ալ հա-
լա՛ որպէս զի իրենց՝ մարմին-
ները պատսպարեն ձմրան խոտու-
թեանէն. եթէ գուր ձեր ինքնուրու
չօգնէք հայտա ո՞վ պիտի օգնէ:
Աւելի լաւ չըլլար որ ձեր քուկ-
ները օտարու հիններու առջեւ բա-
նալու տեղ ձեր կրկններուն գրկէք,
օտարու հինգ ձեզ սիրել կը ձե-

նաւելութիւնները՝ բաւական է
միայն յիշել որ 58ր իտալիան իրեն
առաջնորդ ունէր Պիէտրո թիֆլիս
նորութիւն մը, հետեւաբար և
կրթնելու գլխաւորութիւն լա-
նեցնելու սրժ կոտան մը: Ուր
պիտի գործածէր Քալուր իր զիւս-
նագիտական գաղանդը՝ եթէ չըլլար
Վիքթոր Էմմանուէլ, որ Սրբի պա-
տերային մէջ Թրանսային գաղանկ-
ցելով իրաւունքը ստացաւ մասնակ-
ցելու 1856ի Փարիզի վեհաժողովին,
ուր Քալուր իբր իր ներկայացու-
ցիչը, իտալիայի խնդիրն ալ մէջտեղ
դրաւ: Անկէ ետքը Վիքթոր Էմմա-
նուէլ անձնակառն սեռակցութեամբ
ու խնամակարան կուսերով աւելի ամ-
բայնելով իր կարգը նախօրէն Վի-
հա՛ անոր անկողնութեամբ պատե-
րալով յայտարարեց՝ Աւարիայի դէմ,
եթէ համոզուած է որ այս սեռակ-
ցիչ մը կարելի է լսկ զիւսնադի-
տութեամբ յաջողցնել: Չօպանեան
իր զիւսնադիտի անունը ուղեղովը
վազուրնէ սկսած թո՛ղ փորձէ այս
կարգի կարգի հաստատել Վիքթոր
կայսեր կամ Ռուսոյ Չարին հետ:
Մինչդեռ մեր համոզումը սա է, թէ
մեր գիրքը այնքան անորոշ, արատ-
քին քաղաքականութիւնը մեզի
նկատմամբ այնչափ յեղափոխ ու
թաղու են, որ ոչ միայն յեղա-
փոխականները, այլ նոյնիսկ նու-
պար վաշայի պէս հանձնարել զիւս-
նակները չկրցան որչ կարծիք
մը յայտնել, բացի զէպերու աղե-

ւացնէ բայց անոր սէրը կեղծ է
և արդէն ինքն ալ օտար:

Ո՛վ Մշեցի եղբայրնե՛ր, ինչ-
պիտի անգլիոսութեամբ կը համար-
ձակիք հարցնել լրագիր կարգա-
ցողներուն, թէ ինչ «ստեղծ» կը
գրեն խաղէթաներուն մէջ. ինչ
միթէ խաղէթաները ձեզի խա-
բել կուզեն. չէ մի կարծէ՛ք,
նոյնիսկ ձեր կրկններն են որ ի-
րենց բերնով կը նկարագրեն
դառն կեանքերին, որպէս զի
գուր կորստած հայրեր կարգա-
լով ձեզ ընտանեաց վիշտերը
խղճահարուիք ու յիշէք ձեր
«քուլիթութեան», հայրենիքը: Սա-
կայն ամառս, զի դուք այժմ ան-
հաւատ թողման էք դարձեր օ-
տարու հիններու բազկաց մէջ, Ս՛
հերիք է ո՞վ Մշեցի պարտանք,
ամէն բան իր չափն ու սահմանը
ունի որ գուր արդէն ամենայն
ինչ իր գագաթնակէտին էք հա-
սուցած:

ԱՐՄԱԽԻՐ
Եաշ, 15 Նոյմ.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Պ. ՆՈՒԵՂԻՆ

Դուք ըսած էք, որ ես «լաւ
գրող բայց ոչ լաւ մտածող» մըն
եմ. որովհետեւ մէկ կամ մէկ
քանիներու բարբառներն են
անտարբար մտքով հասարակութեան
մը սիրտն ու զգացումը չափել
տուրու անարդարութիւնը ըրած
եմ:

Իրաւունք պիտի տայի ձեզ
բարեկամ. եթէ ձեր գրութեան
մէջ ցոյց տուած ըլլայիք միթ-
թարական երեւոյթ մը որ աղ-
գային ոգոյն հետ ցոլացնելու իւ-
ցութեան առկայութեամբ հակասա-
կան ենթադրութիւններն և ի
վերջոյ ընդհանուր հետեւանքն չա-
փուած պատգամ երէն, որոնք
«կարծը կոտորելն ետքը ճամբայ
ցոյցներն» չափ պարզ բաներ են:
Աւելին կայ. Անգլիական կառավա-
րութեանը, որուն զիւսնադիտնե-
րուն նրբամտութեանը վրայ՝ չենք
կարծի որ Չօպանեան վայրկեան
մը իսկ կասկածի, Հայկական դա-
տին պաշտպանութիւնը ձեռք առաւ
ու մղեց մինչեւ զինալ միջամտու-
թեան մը պէտքը. ստանց թերեւս
մաքէն իսկ անցնելու, որ այնքան
անակնկալ կնճոտութիւններ պիտի
ցնոյ էին իր առջեւ ու ի վերջոյ կո-
րագլուխ պիտի նահանջէր՝ իր փրկս-
թի՛վը մեծագէտ խախտելով:

Բայց ինչ որ ամենէն աւելի մեր
զարմանքը կը շարժէ, սա է որ Չօ-
պանեան ս՛ իրքէն ի վեր մեր յեղա-
փոխական արդի գործունէութեան
իրիւ մտաւայար կը յանձնարարէ
Վահան Մամիկոնեանը: Որպէս զի
չբէ թէ մենք ալ հայոց պատմու-
թիւն ինչք կարգադրած, հոս մեր
սեռութիւնը քիչ մը ընդլայնելով
պարզեմք համոզուակի վահանի կա-
տարած գերը, այնպէ՛ս ինչպէս մեր
միջեւ հիմա հրատարակուած պատ-
մութեան գրքերը կը ներկայացնեն:
Վարդանանց պատերազմն յետոյ
Դիլիսի արքունիքը համոզուելով,
որ անկարելի է իր քաղաքականու-
թիւնը բոնի յաջողցնել հրահանգ

միւրցիին բարձր ոգոյն արժանի-
քը:

Ես իմ գրչիս վրայ որ եւ է
գաղափար չունիմ, քանի որ գը-
րողներու դասին չեմ պատկանած
և չեմ ալ պատկանիր. իսկ խոր-
հողներու մասին հաւանութեան կըր-
նայի վստահացնել ձեզ. Չայս
հաստատելու համար վստահ եմ,
որ չէք զիմեր ինձ աւելի երկար
փաստեր մէջ բերելու. բաւական
է յայտնել որ գուր ալ հետեւե-
լով մեզ կամ լաւ է ըսել իրական
ճամբարութեան, զանց ըրած
չէք դատապարտելի ներկայա-
ցրելու իզմիրցին. սա տարբե-
րութեամբ միայն, որ գուր ընդ-
հանուր մեղքը ս. առաջնորդին
վրայ կը նետէք, ինչ որ մեր
կարծիքը այդպէս լինելու կրնայ
տարբերիլ, քանի որ այս մար-
դէն առաջ ալ իզմիրցին ճանչ-
նալու պատիւը վայելած ենք:

Քամահարանքով սղոյզած եմ և
չպիտի գագրիմ քանի նման եւ
րեւոյթներու հանդիսատես լի-
նիմ. զգուսնքով պիտի պայխա-
րակեմ զայն՝ բացառութիւնները
խնամքով մը մէկ կը վերցնելով,
որոնք ոչ միայն յարգելի այլ
սիրելի են իսկ:

Իմ կարծիքով անհատներ չեն
անոնք որոնք յայտնի դատա-
կարգերու ներկայացուցիչներ
ըլլալով թուին. ու ճայրճ ներկա-
յացուցիչներու խմբակը ճիղուի-
թութեանց մարմնացում մըն է և
ոչ ալ ինչ. Մեքիքսիկոսի վրայ
կը յարձակիք, բայց այդ մար-
դուն հանդիսա թողէք իր տեղը.
որովհետեւ անոր ընթացքի պա-
տասխանատունները նոյն մեր յի-

տուաւ Հայաստանի մարդանկրու-
ն, որ սկսին սիրաշահիլ հայերը և
պարգուներու ու պատիւներու միջո-
ցով սարածել անոնց մէջ Պարսիկ
կրօնքը: Եւ ինչպէս Ղուպի Փարպե-
ցին կը հաղորդէ, այս մեղմ ուղղու-
թիւնը իրօք աւելի մեծ արդիւնք
ունեցաւ, քան սորն ու չլիթան:
Ուրացողներու թիւը ամէն կողմ
չատցաւ, վատերը փառքի ու պաշ-
տօնի հասան, վերջաւ Հայաստանն
լաւութեանը, հետագա իմաստու-
թիւնը, մեռաւ քաջութիւնը եւ տի-
րոզ բարոյական անկումը այն աս-
տիճանի հասեր էր, որ մինչեւ ան-
գամ Պարսից թաղաւորը Պարսից կը-
սէր. «Իմ սէրութեան մէջ ամենէն
անպիտան մարդն ու ստորին գործը
Ասորին է, բայց Հայը անկէ ալ վատ
է»: Ահա այս վիճակին մէջ գտաւ
Հայաստանը Վահան երբ չափազա-
նաւ: Վարդանանց պատերազմի մի-
ջոցին գերի բռնուելով՝ Պարսից ար-
քունիքին մէջ մնացած էր քանի մը
տարի ու յետոյ իմաստուն մօր մը
խնամքին տակ կրթուած՝ Մամիկոնե-
անեաներու զեղական քաջութեան կը
միացնէր խորամտակութիւնն ու ի-
մաստութիւնը, ձեռնալով որ Հա-
յաստանի այս ինկած վիճակին մէջ
անկարելի է բան մը ընել, հանրա-
յին աւարկէն հետո՛ւ առանձնացած
կապիւր: Բայց իր հայ թշնամիները
զարձեղ պատրուակներ գտան զին-
յը իբրեւ Պարսից դառն անհաւա-
տարիմ ամբաստանելու: Վահան այդ

չած ներկայացուցիչներն են զորս հուռա հուռաներով ասկէ գուրս հանած «Մեղքի սեթեք»ը ԸՆԱԼը լաւ գիտէին :

Սրբազանը փոխուած չէ . եթէ այժմ անցեալէն փոփոխութիւն մը կը նկատուի այն ալ ժամանակի փոփոխութեան արտաբերած շարք մը նոր խնդիրներն են , որոնց սրբազանը կը վերաբերուի այնպէս , ինչպէս պիտի վերաբերուի 12 տարի առաջ եթէ գոյութիւն ունենային . . . :

Զարմայայ որ երկրաշարժի առթիւ ըրած հանգանակութիւն կըսէք , մասնաւորելով , իբր թէ այդ հանգանակութիւնը բացուած լինէր միայն հայերուս մէջ և հայերուն համար : Ընդհակառակը եթէ թուրքերը չըլլային թե՛րեւս հայերուն երբէք նայող չըլլար : Մեր ազա-նջները իրենց ըրած նուէրին միայն մէկ եր-րորդ կամ մէկ չորրորդը յատկացուցին իրենց ազգակիցներուն , մնացեալը տաճիկներուն գնաց . . . հանգանակութիւններու այս ձեւը կամաց , կամաց օրէնք մը պիտի դառնայ իդմիր-ցիներուն համար , քանի այս վատ հոգի սարկութիւնը իր թանձր խառով պատէ անոր հոգոյն վրայ :

Իզմիրի մէջ միակ միութեամբ կան կէտ մը պիտի համարէի ընդհանուր ազգային պղատոնական զգացումը , եթէ զըտնուէր գէթ յայտնի դատակարգ մը որը կարենար նպատակին ծառայեցնել զայն :

Թ. ՂԱԿԻՑ

— — —

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոմս Կուլուխովսկիին յայտարարութիւնը թէ Ռուսիոյ և Աւստրո-Հունգարիայի միջեւ Արեւելեան գործերու մասին կատարեալ համաձայնութիւն կը տիրէ , մեծ տպաւորութիւն գործած է թէ Եւրոպայի մէջ և թէ Բ. Գուռը : Լուր կը պատի թէ «Ներտասարդ թիւրքերը» նպատակ ունին յայտարարութիւն մը հանելու և կը պատրաստուին ցոյցեր ընել :

— Պէրլինի լրագիրներէն մէկուն մասնաւոր հեռագրով Լոնտոնայէն կիմացնեն թէ Օրանժի , Ռիվէրի , Սթորիլի և Վարքի-Իսթի հօլանտացիները բացարձակապէս ապստամբած են Անգլիոյ դէմ , և միայն Պօէրներու հետ :

— Ամերիկայի , Անգլիոյ և Գերմանիոյ ներկայացուցիչները Վաշինգթոնի մէջ ստորագրած են Սամօս կղզիներու բաժանման դաշնագիրը : Ստորագրուած դաշնագիրը իր կտրելու կէտերուն մէջ , դրեթէ նոյնն է , ինչ որ առաջին անգամ եղած է Անգլիոյ և Գերմանիոյ միջեւ :

— Բեթելսպուրկի մէջ Թրանս-Վալցըններուն օգնելու համար Հոլանտացիներէն կազմուած զօմարթիւն մինչեւ հիմա 70,000 ռպլ. հաւաքած է . հանգանակութիւնը գեռ կը շարունակուի :

Ռուսական «նովոստի» թերթը Գերմանական կայսեր խորհուրդ կուտայ , յանուն ամբողջ Եւրոպայի միջամտել զաղբիցներու

Անգլո-Թրանսլուսեան պատերազմը . որովհետեւ կրտէ այդ լրագիրը՝ եթէ այս պատերազմը շարունակուի , կրնայ միջազգային խիստ հետեւանքներ ունենալ :

— Պուտարէշթի մէջ 1500 շափ անգործ գործաւորներ ժողով կազմած են : Ճառախօսները պարզած են թէ ոչ մէկ մեծ քաղաքի մէջ աշխատութեան կազմակերպումը այնքան վատական վիճակի մէջ չէ , որչափ հունգարիոյ մայրաքաղաքին մէջ , ժողովը կոպտանայ եղբւր փոթորկալից կերպարանք առնուլ , բայց ոստիկանութիւնը ցրուեր է :

— Ռուսիոյ կառավարութիւնը Ֆինլանտիոյ մայրաքաղաքին մէջ պաշտօնական թերթ մը պիտի հրատարակէ Ֆինլանտիոյ հասարակայ կարծիքին վրայ ազդելու համար :

— Պուտարէշթի մէջ Երիտասարդ թիւրքերու և անոնց համակիրներու դէմ խստութիւնը կը սաստկանայ . «Պէրլինէր» թագապըլտոն կը հաղորդէ թէ՛ բարձրագոյն պաշտօնեաներէն 14 հոգի ձերբակալուած են : Նոյնիսկ Մարիշալ Փուատ փաշան մատնուած է եղբւր իր քարտուղարին ձեռքով , որ հայ մըն է և ամասականի համար դժտուած է եղբւր փաշային հետ :

Այս մատնութեան յետոյ ոստիկանները կուգան Փուատին տունը անոր թղթի թղթները , բայց Մարիշալը անձամբ գիմագրեր է զանոնք և տպա դուրս վաճառու է :

— — —

ԹՄՏՐՈՆ «ԱՆԿԻԼ ՍԼԻՎՈՅ»

«Վէսէլլո» հայ թատերական խումբը , այս գիշեր , նոյեմ. 27, պիտի ներկայացնէ՝ առաջին անգամ ըլլալով «Իպիչին Սէփտաւը» խիստ ծիծաղաշարժ տրամագոմէտի 4 արար :

Ժմնաստիք , տքրօպաթ և պալէթ Օր . Բաթինայի կողմանէ :

Վազը կիրակի՞ գիշեր , նոյ. 28, պիտի ներկայացնէ՝ «Պիկիւնահ Քատըն» ծիծաղաշարժ տրամագոմէտի 4 արար :

Ժմնաստիք , տքրօպաթ և պալէթ Օր . Բաթինայի կողմանէ :

Արարուածներու միջոցին զինուորական ճիւղապետ խումբը հատկապէս կտորներ պիտի նուագէ :

Յառաջիկայ երեքշաբթի և հինգշաբթի գիշերները մեծ պատրաստութեամբ և պէտք եղած շտապարաններով պիտի ներկայացուի ժիւլ Վէրնի երկերէն «Սէքսէն կիւնտէ ակտիւր ալէմ» անուն թատերախաղը , որ երկու երեկոյթի բաժնուած է : Դրանք սովորական , փափաքողք երկու երեկոյթի տոմսակը կրնայ ընդունիլ :

ՅՅ ՃԱՆԿԻԿԱՆ

ՆՈՐ ԲԱՏՈՒԱՅ ԾԽԱՎԱՅԱՌԱՆՈՑ Թիւ 389 Իսկիշ-պաշի

Կը վաճառուի ծրարատու , բոսթայի և աղբարտարի ամէն տեսակ բուխր նաեւ զանազան տեսակ սիկարներ : Ծձ թուականին հրապարակ ելած Պուլկարիոյ լզահատանց Պորխի պատկերազարդ քաթ-փօսթայներ , որ այժմ չեն գործածուիր : Նոյնպէս եւլ կը վաճառուի «Շարժում» :

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան գիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը :

Печатница «Взгляд» Варна

վատերէն քօծիքը ազատելու համար հաւատքն ալ ուրացաւ : Սակայն կաթողիկոսն ու ուխտագահ նախարարները , որոնք շարունակ գաղտնի խորհրդակցութիւններ կընէին Պարսիկներուն լուծէն ազատելու համար , Վրաստանի քաղաքապետութիւնն օգուտ քաղելով՝ առաջարկեցին Վահանին իրենց հետ միանալ ու ապստամբութեան դրօշը բարձրացնել :

Վահան , որու մեկուսացման միակ պատճառը նախարարներուն չլրացուած անվստահութիւնն էր սկիզբէն մերժեց անոնց առաջարկը , բայց ետքէն միահամուռ թախանձանքին տեղի տուաւ : Իր կասկածները չուշացան իրականաւոր , քանի մը փոքր ընդհանրուումիւրէ հաջող , նախարարները քաջուեցան ու Վահան փոքրիկ խումբով մը մնաց իշնամիին դէմ : Ի վերջոյ յաջողեցաւ իր պայմանները Պարսից իսպաղառին ընդունել տալով խաղաղութիւնը հաստատել Հայաստանին մէջ . բայց այս միակ իր գործը չէր Պարսիկները Վարդանանց պատերազմներու շնորհիւ արգէն յոգնած էին հայերու դէմ մաքառելէ , մանաւանդ Հիփթաղներուն դէմ մեծ պատերազմի մը բռնուած էին , ուր նոյնիսկ Պերոզ թագաւորը սպանուեցաւ , ասոր յաջորդը Վաղարշ խոհեմութիւն համարեց հաշտութիւն կնքել Հայոց հետ՝ Վահանի առաջարկները ընդունելով :

Ահա Վահան Մամիկոնեանի կատա-

րած դերը , որ սակայն Չօպանեանի ըմբռնած եղանակով շրջադարձուած կան ոչ մէկ ուղղութիւն կը պտուտանակէ : Եթէ Վահանի սկիզբէն ձեռնարկուած նախադրումներն ու հաւատարմութիւնը կուզէ օրինակ բերել իր քաղաքական ճարտարութիւն մը , ասոնք լոկ անձնական ու կարճատեւ խորամանկութիւններ էին , որոնք Վարդանան ալ յանձն առած էր իր զուտ հերոսական աւելումը հանդերձ : Վահանի բուն գործը , ա՛յն որ հանրային ասպարէզին մէջ կատարեց , հիւր ասորի շարունակուող այն կորուսէ , զոր ան մղեց սնահատարութիւն մը : Տեսնելով որ չպիտի կրնայ երբէք իր հօրեղբորը պէս 66 000 թանակ մը գումարելով բաց ճակատամարտ մը զել Պարսիկներէն դէմ , Վահան ասպատակի գիրքը ընտրեց , որու մէջ մեծ ռազմագէտի մը տաղանդը ցոյց տուաւ : Ամէն պարագային մէջ Վահան իր հօրեղբորն ու հօրը գործը առանց յուսահատելու շարունակելով էր որ յաջողութիւն գտաւ : Ընդհակառակը եթէ ան իր ժամանակին Չօպանեանեաներուն քարոզներուն անսալով սուրը վար գնէր ու Գիւտ կաթողիկոսին քով ստրկած գրակալութիւնը ծաղկեցնել ջանար՝ Հայաստանը այդ օրը երբէք չէր տեսար : Վահանի ասպատակային գործը՝ թէեւ սակի փոքր սահմանի մէջ՝ բայց անհամեմատ աւելի զժողովրդի պայմաններու տակ՝ կրկնեցին մեր

արդի յեղափոխութեան հրոսակները : Չէլլօն , Ճանօն , Արարօն , Սերօրը , Գոնին , Սքանչիլիք՝ քաղութեամբ ու ճարտարութեամբ մը Ասկայն ահա՛ նոյն իսկ այս մարդերն էին , որոնք Չօպանեանի կարծիքով «անիմաստ ու թեթեւ յանդգնութիւններով հայրենիքին մէջ ցեղին ապահովութիւնը վտանգեցին» :

Վերջացնելով մեր լապտախաւերը կը յուստնք թէ՛ Չօպանեանեանեանական ու եւ չնկատուած չպիտի տեսնայ մեր այս աղբիւրն մէջ , քանի որ զինքը անձամբ ճանչնալու պատահութիւնը չենք ունեցած երբէք : Իրեն հետ միասին մենք ալ կը մեղադրենք Վահան անհատները , որոնք առանց փաստի կամ բացատրութեան ձեռքով չենք անհատները , մասնիկ եւն . կը ներկայացնեն զինքը : Բայց միւս կողմէն անկեղծօրէն խորհուրդ կուտանք իրեն , որ եթէ չուզէր իր վարկը աւելի ստորնացած տեսնել՝ թող ասկէ հաջող միջամտէ մի միայն Վահանի տեսակ խնդիրներու , որոնք քիչ թէ շատ ուսումնասիրելու առիթը ունեցած է : Որովհետեւ հակառակ իր արգահատելի ինքնախոհեմութեան , հայ ժողովուրդը ոչ թէ միայն իր կարծած ձեռովը չէ ըմբռնած իր գրածները , այլ եւ անոնցմէ զգացեր է զլուսանք մը , որ որչափ

այս կարգի սոփիստութիւններու մօտան կանցնի , այնչափ աւելի կը շեշտուի : Հայաստանի փրկութեան գործը այնքան բազմադիմի ջանքեր կը պահանջէ , որ ամէն հայ հօն իր մասնակցութեան ուրոյն բաժինը կրնայ ունենալ : Երանց ուրիշները խանդարելու : Անհատներ միեւնոյն թիւին մէջ կը հաղորդէ թէ Քոստանթնիստի կառավարութիւնը շարք մը սկսած է , հայ գրակալութիւնն ու պատմութիւնը եւ յոպային ճանչնելու համար : Հասա՛ գողելի գործ մը , որով շատ աւելի մեծ ծառայութիւն մը կրնայ մատուցանել ազգային գատին՝ քան ինքը չհասած խնդիրներուն վրայ էջեր մտնելով : Իւրաքանչիւր հայ թող իր պարտականութիւնը կատարէ , բայց նախ իր ոյթերը կշռելով թա՛ղ ձեռնարկէ ա՛յն գործին , որուն ընդունակ է առանց օգտակարութիւնը իր ձիւղին միայն սեփականելու , առանց միւս գործիչները անուանարկելու : Ահա՛ այն ժամանակ միայն կրնանք մեր ներքին երկպառակութեանները զաղբիցներով հասնել այն նպատակին , զոր այնքան պիղծեցի կեղծով կամ փոփէ Չօպանեան իր վերջարանին մէջ :

ԿԱՐԻԾ

Տիրիխ , 17 նոյ.

— — —